



ՌՅԺԵ. 1863 — ՔԱՆԵՐՈՐԻ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ. — ՆՈՅԵՄԲԵՐ

Ս. ՅԻԶԻՏԲՈՒԶԻՏ

† 9 ՆՈՅԵՄԲ. 333.

Աստուածատուր՝ շնորհաւոր անունն՝ պանծալի և սիրելի է աստուածապաշտ ազգաց, աւելի ևս քրիստոնէից՝ ճշմարիտ աստուածապաշտից. և այլ աւելի՝ յարեւելս, ուր թուրք և պարսիկ լեզուաւ յաճախ լսուին Ալլահի՛կրտի և խիշտադատ անուանքն, որ Աստուածատուր ըսել է: Հայոց մէջ այլ այս անուանս որչափ գործածուած ըլլաին՝ յայտնի է մերայոց, նաև խանգարեալ և կտրատեալ այլախոխութեամբքն Աստուածատուր, Աստուր, Եւատուր, Տատուր, ևն: Կրօնք՝ հարկաւ կերպով մը կ'ազդէին մարդկան իրենց կենաց տուրքը ոչ միայն ճանչնալ յԱստուծոյ՝ այլ և խոստովանիլ, անոր համար բնական էր որ իրենց զաւակներն այլ կանչէին Աստուծոյ տուրք կամ պարգև: Այսպիսի բնական ազդման անտարակոյս օրինակը տուին բոլոր մարդկութեան՝ ա-

նոր նախածնողքն, երբ առաջին ծնեալ մարդուն (Կայենի) համար գոչեցին. Ստացայ մարդ Աստուծոյ: Նոյն զգացմամբ շատ հեղ այլ Աստուծոյ մէկ մասնաւոր զօրութեանը կամ շնորհացը նուիրեցին մարդիկ իրենց ծնունդքը, ինչպէս որ Եբրայական աստուածապաշտ կրօնից մէջ էլ (Աստուած) վերջացեալ անուանքն յայտնեն, Գաբրիէլ, Միքայէլ, Դանիէլ, Ուրիէլ, Ռաֆայէլ, և այլն. ըստ այսմ և հեթանոսք՝ որ Աստուծոյ վայլած և չվայլած զօրութիւններ և կրքերը անձնաւորելով՝ բազմաստուածեղան, այն առանձին աստուածոց պարգև կամ նուէր սեպէին իրենց որդիքը. ինչպէս որ (Թողլով զօտարս և) գալով մեր և մեր դրացի ազգաց՝ կու գտնեմք զանուանս Տրդատ, Միհրդատ, Զրուանդատ, և այլն, որք նշանակեն տուրք Տրի, Միհրայ, Զրուանայ: Այսպէս զեղեցիկ

կերպով մ'այլ սեփականեալ են նոր կրօնիցս սրբազանեալ անուանակոչութիւնք, ինչպէս Քրիստոս, Տիրատուր, Խաչատուր. որք մեր քրիստոնէութեան բաւական հին դարուց մէջ այլ կու լսուին. ինչպէս նաև Աստուածատուր անուամբ եպիսկոպոս մը յառաջին կէս Զ դարու: Բայց այս դարուս կիսէն կու սկսի թէ մերազգեաց և թէ մերձաւոր և հեռաւոր արեւելեայ քրիստոնէից մէջ՝ այս վսեմական անուան յաճախութիւնն, և շատ տեղ՝ սկզբնաւորութիւնն. պատճառաւ նախատակութեան մէկ անծանօթ և անկարծելի մարդու մը, որ զայս անունս ինքնին ընտրեւր առեր էր վրան, թէ և ուրիշ լեզուաւ և կոչմամբ. և որոյ յիշատակն հիմայ փառօք կատարուի մեր եկեղեցւոյ մէջ:

Մեր հին պատմաց հարևանցի յիշատակօք և Յայսմաւուրաց համառօտելոյն՝ անշուշտ անծանօթ չէր քեզի այլ, Հայկակ, Ս. Աստուածատուր. բայց այն համառօտ յիշատակաց աղբիւր՝ սրբոյն վկայաբանութիւնն՝ որ դեռ չէր յերևան ելած մեր ազգային պատմութիւնը և Սրբոյ պատմութիւնը երկարօրէն գրողաց ատեն¹, այսօր կու գտուի իմ ձեռքըս, սրբոյն ժամանակակից և չարչարակից անձի մը ձեռքը նախ գրուած², և ուրիշ ճարտար գրչով կոկած. ուսկից կ'իմանաւք՝ որ անոր նախատակութեան օրն եղած է ստուգիւ այսօր, այսինքն 9 նոյեմբերի 553 տարւոյն, (և ոչ 552 ինչպէս կարծուէր ինչուան հիմայ). միանգամայն և քանի մը ազգային պատմութեան և սովորութեանց կարևոր տեղեկութիւն. ներ կու տայ այս գրուածս: Ասոր հաստատութիւն ունիմք և ժամանակակից մեծանուն յոյն հեղինակի մը գրուածոց մնացորդը՝ նոյնպէս նոր գտուած, որ մեր պատմութեան և կերպով մը սրբոյս այլ պարծանք մը կրնայ սեպուիլ. և է նա Մենանդը՝ ժամանակին ամենէն

ճարտար գրիչն, յորում դեռ յոյն ընտիր դասագրաց շնորհքն փայլի, և որ ծանօթ և նշանաւոր էր ի դրան կայսերաց Կ.Պօլսոյ. և այս ատեն (ի կէս Զ դարու) դեռ երիտասարդ, լսելով Աստուածատուրոյ նախատակութիւնն ի Հայս՝ այնպէս պրանչացաւ և վառուցաւ, որ ողբերգութիւն մը գրեց այն դիպուածին վրայ, ինչպէս ինքնին յիշէ, և մեղի ցաւեցընել տայ անոր կորստեանը վրայ, քիչ մ'այլ միտիւթարէ անկորուստ հասցընելով մեղի իր ուրիշ կարճ գրուած մը՝ ի նոյն վկայն, զոր յետոյ յիշեմ քեզի, Հայկակ:

Բայց ինչո՞ւ արդեօք Աստուածատուրոյ վկայութիւնն այնպէս մեծ զարմանք բերաւ և հռչակ ձգեց այն ատեն, որով հիմայ այլ արժանապէս հռչակելի է: — Ասոր պատճառն, բաց ի սրբոյն արիական և գեղեցիկ գործէն և խօսքերէն՝ մէկ մը նոյն իսկ իր ազգը կու սեպեմ, Պարսիկ ըլլալն, ազգ դժուարահաւատ ի քրիստոնէութիւն. մէկ մ'այլ այնպիսի ատեն և այնպիսի տեղ նախատակուին: Տեղն է Դուին՝ բոլոր Հայոց ոստանն կամ մայրաքաղաքն. ժամանակն այլ՝ եկեղեցւոյ հանդարտութեան և մարտիրոսութեանց դարման ատեն մը: — Վասն զի, հոս (եկեղեցական և քաղաքական պատմութիւն մէկ խառնելով) պէտք է յիշել, որ գրեթէ դար մը, կամ գոնէ 70 տարի էր՝ որ դադրեր էին ի Հայս հալածանք Պարսից՝ որք տիրէին մեր աշխարհին մեծագոյն մասին, արդեամբք քաջին և առաքինւոյ Մեծին վահանայ Մամիկոնոյ, որ յետ երկար և դիւցազնական պատերազմաց և յաղթութեանց ստիպեց զարքայից արքայն Պարսից՝ ոչ միայն ազատ թողլու զՀայս իրենց կրօնից մէջ, այլ և յանձն առնլու անոնց վրայ փոխարքայ կամ մարզպան դնել իրենց ազգայիններէն. ինչպէս որ եղաւ նախ ինքն վահան 25 կամ 30 տարւոյ չափ, յետոյ իր եղբայրն վարդ 3 կամ 4 տարի. ուսկից ետև թէպէտ քանի մը տարի Սուրէն անուամբ Պարսիկ մարզպան մը կեցաւ, բայց նորէն իրեն յա-

¹ Հ. Մեղայէլ Վ. Չամչեան, Հ. Մկրտիչ Վ. Ղազարեան:

² Ըստ Յայսմաւուրաց սրբոյն բանտակից Ներսէս արեղայն գրեց զայս:

Նորդեց Հայ իշխան մը, ՄԺԵԺ Գնունին, որ 30 տարի (518—547) քաջութեամբ և խոհեմութեամբ վարեց իշխանութիւնը. և Յունաց ու Պարսից երկար հակառակութեանց և պատերազմաց մէջ՝ իր սահմանները (զարեւելեան Հայս) պահեց ի խաղաղութեան. մինչև նոյն ինքն մեծանուն՝ բայց և խելայեղ և գոռոզ շահնշահն խոսրով Անուշաւան, զոր Պարսք գերագոյն և սիրելագոյն սեպեն քան զամենայն թագաւորս իւրեանց, նաև քան զԿիւրոս իսկ, խոսրով ինքն՝ որ ամեն բան և կարգ վեր վար կու շարժէր, չկարցաւ Հայոց մարդպանը մեղադրել։ Թէպէտ պէտք է հոս զայս այլ խոստովանիմ, որ այս յիշեալ 70 տարուան միջոցս, այսինքն մեծին վահանայ մարգպանութենէն մինչև ի նահատակութիւն Աստուածատրոյ (484—553) մեր պատմութեան միջագոյն ժամանակներէն մէկն է. այս միջոցիս և գրեթէ բոլոր Զ դարուս մէջ ազգային պատմիչ մը չունինք կամ չեմք գտած, որ մեր աշխարհին մէջ հանգիպածները մանրամասն իմացընէ մեզի։

Արդ յետ մահուան ՄԺԵԺայ, որ հանգիպեցաւ Յունաց և Պարսից կռուոց և վիճից ատեն, երկու մեծանուն տիրապետաց օրով, Յուստինիանու կայսեր և խոսրովու, որովհետև արդէն քանի մը Հայ իշխանք (Արշակունիքն Յովհաննէս և իր որդին Արտաւան և կամաւորականքն Ներսէս, Հրահատ և Սահակեղբարք, և այլք անցեր էին ի կողմն Յունաց, և զԱփրիկէ ու զԻտալիանուսէն ի ծառայութիւն կայսերաց, զօրավարելով ասանձին կամ ընդ ձեռամբ բերիսարու և Ներսիսի պատրիկ Հայկազնոյ), խոսրով՝ որ արդէն սկսեր էր ծուռ աչքով նայիլ քրիստոնէից վրայ, և կու նեղէր իր ձեռաց տակ եղողները, (ինչպէս որ մեր սրբոյս վկայաբանութիւնն այլ զայս վկայելով կու սկսի. « Ընդ ժամանակս » թագաւորութեանն խոսրովու որդւոյ » կաւատայ արքային Պարսից՝ առաւել » զայրացեալ լինէր խոստովանութիւնն » որ առ Քրիստոս, և ոչ սակաւ նա » հատակեցան յաշխարհին Պարսից և

» ի դրան արքունի ».) հարկաւ չէր կրնար բոլորովին վատահիլ Հայոց, և ծերունի Գնունոյն (ՄԺԵԺի) պէս, հաւատարիմ համազգի յաջորդի մը յուսալ. ուստի զրկեց պարսիկ մարդպան մը, զոր պատմիչք մեր Դենշապուհ կ'անուանեն. բայց մեր վկայաբանութիւնն ցուցընէ զՆիխուրական. գուցէ այս պատուանշան կամ ցեղական կոչում մ'էր, իսկ առաջինն բնիկ անուն. բայց յոյն պատմիչք այլ Նախորական անուամբ յիշեն զսա քանի մը տարի ետև։ Սակաւ Պարսից առաջին մարդպանաց պէս դառնութեամբ նայիլ քրիստոնէից վրայ. և թէպէտ զեռ չէր համարձակեր Հայոց վրայ ձեռք ձգել, բայց ուրիշ ազգաց՝ որ հոն ի Հայս գլտուէին՝ չէր խնայեր։

Այն ատենները Դուին մայրաքաղաքն Հայոց՝ ոչ միայն անոնց քաղաքական վարչութեան կենդրոնն էր, այլ նաև մեծ շահաստան մը վաճառաց, Հնդկական, Յունական և Կովկասեան ճանապարհաց և կարաւանաց միջոց. և երկար խաղաղութեամբ այլ խիստ շատ հարստացեալ և պայծառացեալ, ամեն արեւելեայ ազգէ մարդ գտուէր հոն. որոց մէջ բազմաթիւ էին և Ռաթիկ ըսուած ազգի մը վաճառականք, (որք հաւանօրէն էին հին Ռազուի սահմաններէն, այսինքն է Ռէյ, Դիհրանի մօտ, վասն զի Պարսիկք Ռազի կոչեն ըզՌազաւցիս, Պարսից և Ասորեստանի միջոց) . ասոնցմէ աւելի էին խուժիկք, որ կրօնիւք քրիստոնեայ, բայց շատն Նեստորական ըլլալով՝ Հայոց չիթութիւն և ատելութիւն պատճառէին. անոր համար Ներսէս կաթողիկոս և յաջորդքն ժողովքով ջանային զգուշացընել ըզՀայս, չկարենալով իշխանաբար վռնտել զխուժիկս, որք երթալով շատնային և լրբանային. մանաւանդ երբ Մանածիհր անուամբ Ռաթիկ մը հաւատալով ի Քրիստոս և մկրտուելով ու Գրիգոր անուանելով՝ նահատակեցաւ Նիխորականի հրամանաւ կամ բռնութեամբ (յամի 547—8)։ Կ'երևի թէ խուժիկքն կամ պատճառ եղած էին ասոր քրիս-

տոնէութեան, կամ իբրև իրենց ազգին մերձաւոր սեպելով՝ մեծ ձայն և հռչակ հանեցին, եկեղեցական և աշխարհական հանդէս և ազաղակ իրարու խառնելով. և անոր մարմնոյն վրայ մատուռ մը շինելով՝ ի Դուին, սկսան թէ հերձուածով և թէ անկարգութեամբ պաշտօն կատարել. որ ոչ այնքան դայթակղութիւն՝ որքան գարշութիւն և նախատինք կ'ըլլար Հայոց, մանաւանդ որ հոն մօտ էր իրենց կաթողիկոսն և կաթողիկոսարանն և ամենայն հայկական ազնուապետութիւնն. որք և ամենայն ուժով միաբանեցան հարկեցուցին զմարդպանն այլ, և այն խուժկաց ժողովարանը հիմն ի վեր աւրեցին. — Այս վկայիս (Գրիգորի Ռաժկի) որ յետ երկայն տարիներու՝ նոր վկայ և առաջին օտար վկայ եղաւ ի Հայս, պատմութիւնն կամ վկայաբանութիւնն ինծի դեռ հասած չէ, որով կարևոր դիպուած մը մթութեան մէջ կու մնայ, այսինքն այն Ռաժկին և խուժկաց մէջ եղած վերաբերութիւնն. սակայն իր առած Գրիգոր անունն և մեր տօնացուցին մէջ անցնիլն՝ վկայեն իր ուղղահաստութեանը. մէկ մ'այլ յայտնի կ'երևի որ հրապարակաւ և նշանաւոր կերպով մ'եղած է նահատակութիւնն. այն այլ պատճառ եղած է աւելի հռչակաւոր նահատակութեան մը:

Ռաժկին վկայութեան տեղն որոշ չյիշուիր, այլ այնպէս կ'երևի թէ Նիխորականի բանակին մէջն էր և ճամբու վրայ՝ ի Հայս գալու ատեն. և յայտնի այլ է որ մարդպանի մը բանակն բազմաթիւ և դաս դաս մարդկան ժողով մ'էր. անոր համար շատ հանդիսատեւք կային անոր վկայական մահուան, ինչպէս նաև անոր քննութեանն և պատասխանատուութեանցը: Հանդիսատեսաց ամենէն աւելի զուարճացող դասն, և ըստ մեզ ամենէն զզուելին՝ էր Պարսից կրակապաշտ մոգուց դասն, որք մարդպանին հետ կու գային՝ դարձեալ իրենց միարմուր մեր այրարատեան սրբազան դաշտերը տխրեցընելու, և թերևս իրենք զրգուեր էին զմարդպանն՝

այնպիսի տարածամ զոհով մը իր մուտքըն ի Հայս նշանաւոր և ատելի ընելու: Բայց իրենց մէջ կար երիտասարդ մ'այլ՝ մոգ և մոգի որդի, իբր 25 տարուան, որ իրենց դենին ամեն վարդապետութիւնը լաւ գիտէր, և յաջող ու խելացի ճանաչուէր. որ հոս ոչ այնքան հաճութեամբ որչափ զարմացմամբ կեցեր, բարձրակամար յօնքերը իջուցեր, սրածն թուխ մօրուքը ձեռքն առեր լռած կու դիտէր և կ'ափշէր. մանաւանդ երբ կու լսէր վկային անվախ և զուարթ խօսքերը՝ չարաչար տանջանացը մէջ: Եւ երբ անոր զոհը կատարուեցաւ, գրեթէ իրենն այլ սկսաւ. մոգութեան խաբէութիւնը և քրիստոնէութեան ճշմարտութիւնը և մեծութիւնը ճանչցաւ. այն օրէն ետև այլ երեսին գոյնն և յօնքերուն հպարտութիւնն գնաց. մանաւանդ երբ տարակուսի և տագնապի մէջ քնանալով՝ երազով մը տեսաւ զինքը քրիստոնէից եկեղեցւոյ մէջ, ուր սպիտակազգեստ անձ մը զինքը կու շրնորհաւորէր հոն գտուելուն համար, և կու յորդորէր հետեւելու քրիստոնէից: Արթընցաւ և զուարթացաւ երիտասարդ մոգն, որոյ անունն էր Մախուշ, և հայրենեօք էր ի Բերշապուհ գաւառէ Պարսից. ծննդեան գեղն այլ կոչուէր Քունարաստան. որոց ո՞ր կողմն ըլլալն հիմայ ինծի ծանօթ չէ, և ոչ այլ շատ հետաքննելի, աւելի իր կատարածին տեղը դիտելով:

Մախուշ զատուելով մարդպանին բանակէն՝ որ յԱյրարատ կ'երթար, ճամբան փոխեց դէպ ի նահանգն Սիւնեաց. և առանց որոշ ամենուն յայտնելու ո՞վ և ի՞նչ մտաց վրայ ըլլալը, սկսաւ գաղտուկ քննել և տեղեկանալ քրիստոնէութեան, որ այն (Սիւնեաց) կողմերը թէ աւելի համարձակ կը պաշտուէր և թէ աւելի գիտուն վարդապետներ ունէր յաշակերտաց մեր երանելի քերթողահօրն Մովսիսի և Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի: Քանի մ'ամսէն դարձաւ Մախուշ ի Սիւնեաց իբրև կէս քրիստոնեայ, և եկաւ ի մայրաքաղաքն Դուին. ուր իր մոգ ըլլալը յայտ-

նի ըլլալով՝ պէտք էր որ մոգուց քով
այլ գտուի. ուստի մտաւ խառնուեցաւ
'ի գաս մոգուց Հայոց Համակարին, որ
կ'երևի թէ Պարսից թագաւորին կողմէն
դրուած հարկաժողով պաշտօնեայն էր :
— Թէ և մոգուց հետ կու կենար և ա-
նոնց պաշտամանց ներկայ կ'ըլլար Մա-
խոշ, բայց սրտով ուրիշ տեղ էր. մար-
մնով այլ անոնցմէ հեռանալու և սրբ-
տին հետ միանալու համար յեկեղեց-
ւոջ՝ առիթ մը միայն պէտք էր. առիթն
այլ շատ չուշացաւ հանդիպելու :

Ջրագեշտի հետևողք կամ՝ մոգք՝ որ-
չափ այլ 'ի սկզբան պարզ կրօնք մ'ու-
նէին. այնչափ այլ անոր յիշատակներ
կամ տօները շատցուցին. տարւոյն ա-
մեն օրերն այլ մէկմէկ իգէտի կամ
ոգւոյ նուիրած էր. ամսոյն ամեն մէկ
օրն այլ իր առանձին անուն և իգէտն
ունէր. ևս առաւել առաջին օրն կամ
ամսագլուխն՝ սրբագոյն սեպուէր և հան-
դիսիւ կու տօնուէր ատրուշանի (կրա-
կարանին) դիմաց : Այսպէս երբ եկաւ
իրենց մեհեկանի ամսագլուխն ձմեռ
ատեն (որ թուի թէ Միհր ամիսն էր,
և իբր 'ի սկիզբն 549 տարւոյն), Համա-
կարն իր ապարանից մէջ ատրուշանին
դիմաց օրինական տօնը և կրակին նուէ-
րը կատարել տուաւ : Այս նուէրը կեն-
դանեաց զոհ չէր, ուրիշ հեթանոսաց
ըրածին նման, այլ եղոտ նիւթեր որ
կրակին վրայ թափէին. զոր մեր պատ-
միչն ռդտէզ կոչէ. « և ըստ սովորու-
թեանն իւրեանց զոհս աղտէզ մա-
» տուցանէին հրոյն » : Մոգերն այլ ա-
սանկ ատեն կրակին դիմաց կենային՝
բերաննին մասնաւոր շինուած երիզով
մը կապած, որպէս զի շնչով այլ չպրդ-
ծեն սուրբ կրակը. ձեռուրնին այլ կունտ-
գլուխ գաւազան մը կամ ոռնն կ'ըլլար,
'ի նշան հրամայելու : Այս ձևով և կեր-
պով կեցեր էր Մախոշ այլ միւս մո-
գուց հետ կրակին դիմաց. և անշուշտ
բերանակապին տակ առանց տեսնուե-
լու կու ծիծաղէր իրենց խայտառակ
կրօնքին վրայ. մանաւանդ երբոր սա-
տիկ պաշտօնատարութեամբ չափէն ա-
ւելի առատապէս մատուցին աղտոտ

աղտէզը, և անյագ կրակն այլ իբրեւ լա-
փելէն վերջապէս կշտանալով՝ սկսաւ
ուռիլ, բոցերը բարձրացընել ինչուան
ատրուշանին սենեկին ձեղունը : Մա-
խոշի ծիծաղն ուրիշներուն 'ի լաց դար-
ձաւ. կրակն կատղեցաւ, բոցն աճեցաւ,
բռնկեցաւ ձեղունն, և յանկարծ հրը-
դեհի ծուխն ծաւալեցաւ : Շփոթեալ
մոգերն՝ կապերնին քակեցին, զոհի
նիւթերը և գործիքը մէկդի քաշեցին,
իրենց պաշտած կամ պատուած կրա-
կին չափազանց գործունէութիւնն այլ
սանձել կ'ուզէին, կ'աշխատէին, բայց
հնարք չեղաւ. անճրկած՝ ատրուշա-
նէն դուրս ընկած, և քիչ մ'առաջ կա-
պած բերաննին հիմայ կրցածնուն չափ
մեծ բանալով՝ սկսան օգնութեան կան-
չել իրենց անզուսպ չաստուածը զըս-
պելու : Շնչոց շփոթութիւնն ձայնձը-
նեցաւ բոլոր քաղաքը. հազարապետն
Հայոց, այսինքն ազգային կամ քաղա-
քին ներքին կառավարութեան իշխանն՝
փոխանակ նիւթական հնարքի դիմե-
լու, այսինքն ջրոյ, որով կրակը մարե-
լը՝ մեծ մեղք և յանդգնութիւն սե-
պուէր Պարսից, և հետևաբար իրեն
կամ ազգին մեծ փնաս կրնար բերել,
գրեթէ կու հարկաւորէր գերագոյն
հնարքի կամ հրաշքի մը դիմելու .
ուստի փութացաւ վազեց յեկեղեցին՝
ուր կրօնից սրբութեան պաշտօնեայ-
քնն այլ իրենց տօնը կատարէին, և
կ'աղաչէր կու ստիպէր որ սուրբ խաչն
առնուն երթան յաղթեն մարեն կրա-
կը : Փութացան քաջահաւատ պաշտօ-
նեայքն այլ¹, առին իրենց և ամենայն
աշխարհի փրկութեան գործին՝ սուրբ
խաչը, հասան կանգնեցին կնքեցին կատ-
ղած կրակին վրայ. և մէկէն « բոցն տա-
րածեալ՝ շիջանէր առհասարակ » : Բո-
լոր մեծ մայրաքաղաքն Դուին տեսաւ
այս հրաշքը, քրիստոնեայ և հեթանոս
հաւասար. ոչ ոք կրնար ուրանալ կամ

¹ Թայսմաւուրք կ'ըսեն. « Եւ կաթուղիկոսն
» տէր Մովսէս առեալ զքահանայն ամենայն
» խաչիւ և աւետարանաւ, լուցեալ մոմեղնոք
» և բուրվառօք և եկեալ եկաց », և այլն : — Բայց
այն ասեն դեռ Մովսէս չէր եղած կաթուղիկոս :

զարմանքը ծածկել. ուստի և առանց վախի նոյն խակ համակարին խաթունն՝ որ իր տանը և ընչից մոխիր դառնալը աչքին առջև կու տեսնէր, այս անակընկալ ազատութեան վրայ լի գոհութեամբ շնորհակալութիւն (և ընծայ) դրկեց պաշտօնէից սուրբ եկեղեցւոյն և խաչին։

Սակայն եղածին վրայ ամենէն աւելի զարմացողն կամ զարմանքէն օգուտ առնողն եղաւ մեր Մախոշը. այսպիսի յայտնի հրաշք, և քրիստոնէից պարծանաց խաչին զօրութիւնը տեսնելով՝ այլ չգիմացաւ կամկար կարկած կենալու. խլեց բերանակապը ձգեց կոխեց, ձեռքի մոզական ուռը զարկաւ 'ի գետին կոտրտեց. և վազելով եկեղեցւոյ պաշտօնէից մէջ՝ յափշտակեց սարկաւազին ձեռքէն բուրվառը, և քան զաղտէզն լիուլի լեցընելով խունկը՝ ամենայն ուժով կու շարժէր կու ճօճէր, անուշահոտ և պղծահալած ծուխը՝ հըրդեհին բոցէն ու մոխէն վեր բարձրացընել կու ջանար։ — Եւ անշուշտ հասաւ այլ թէ ոչ տեսանելին՝ այլ իմանալի ծուխն՝ աւելի 'ի սրտէն Մախոշի քան 'ի բուրվառէն՝ 'ի վեր քան զբարձրայարկս ապարանից համակարին, նա և քան զկաթուղիկէ զմրէթս Դունայ, մինչև յամպս՝ յորս հանգչի Աստուած։ — Ապա նոյն տաքութեամբ և վառեալ հաւատով բուրվառը դարձընելով պաշտօնէից՝ ճամբայ դրաւ որ երթան իւրենց եկեղեցին և իրեն համար այլ աղօթեն. «Խնդրէք յԱստուծոյ վասն իմ, զի և ես քրիստոնեայ եմ»։

Մէկ ժամուան մէջ ինչ այլ և այլ տեսարանք. քանի զարմանք յերկրի և յերկինս. ինչ ուրախութիւն և պարծանք քրիստոնէից, և փառք քեզի, ով սքանչելի գործիք. որ երբեմն քան զամենայն գործիս դժպէսի և չարաչար էիր, հիմայ քան զամենայն ցանկալի և փրկկարար. երբեմն անյուսից անդամ դառնազոյն 'ի դառնութիւնս, հիմայ ամենէն վերջին և զօրաւոր յոյս սրտի. սրտի՝ որ աշխարհիս և կենաց ունայնութեանց և աղտեղութեանց մէջ թաւալելով, երբ կու հասնի անոնց վերջը,

և երբ ոչ օգնութիւն և ոչ դիւրութիւն մը կրնայ գտնել անոնցմէ կամ ուրիշ մէկէ մը, այլ և սոսկալի վախով կու պաղի՝ յաւիտենական դատաւորի և դատապարտութեան մը մերձաւոր յիշատակաւ, յանկարծ նուաղեալ աչաց վերջին լոյսը քու վրադ կ'ընկնի, և հաւատոց վերջին ճգով տեսնելով 'ի քեզ կատարուած աստուածային գերազոյն հանդէսը և զոհը, վերջին քայլին հասած յոյսը պնդապինդ կու բռնէ. սիրոյ կայծակ մը կու ծաթէ հոգւոյն վրայ, և գրեզ, ով աննման անգին խաչ, գրեզ որ չնչին փայտի կտոր մը կ'երևիս, աւելի քան զհամատարած ջրհեղեղին վրայ լողացող մարդակեցոյց լաստափայտը՝ մեծաբաց և ամուր կամուրջ մը ձգելով երկու յաւիտենականութեանց խորանդունդ վհին վրայ, կ'անցնի 'ի կողմն փրկութեան և անվախճան կենաց։ . . Ո՛հ, ինչո՞ւ այսն ի վախկան կրաւր մարելէն մեծ հրաշքդ՝ որ Մախոշի հոգւոյն աչքերը բոլորովին լուսաւորեց, ինչո՞ւ չբացաւ անոր ընկերաց մոգուց աչքն այլ, որը փոխանակ անոր պէս պայծառանալու, կարծես անոր լուսոյն աւելի սևերես երեցան. կրակին վախէն աւելի՝ Մախոշի քրիստոնէութենէն տազնապելով՝ իրենց չաստուծոյն աւելցուցած մոխրին գոյնն առին, և պահլաւերէն պապաղելով, մանաւանդ թէ սատանայօրէն բարբառնելով՝ մոռցան, ով կոյրք և ապերախաք, դեռ նոր տեսածնին. և այն գիշերը խառնակ ու խելառ խորհուրդներով կոծուելով, երկրորդ օրը հազիւ լուսցած՝ գնացին մարդպանին մատնելու իրենց դասէն ելած և քրիստոսի փարախը մտած Մախոշը։

Նիխորական, որ (ինչպէս իր վերջը ուրիշ աշխարհի մը մէջ ըրած գործովն այլ կ'երևի), մեծախօս բայց վատաւսիրտ մարդ մ'էր, մէկէն Մանաճհրի պէս զՄախոշ այլ յատեան կանչեց, և սկսաւ յանդիմանել. «Այ թշուառաւ կան, ընդէր զհայրենի մոգութիւնս սըն թողուս, և յիմար և ուխտաւ կորոյս լինիս։ — Պատասխանի ետ երանելին և ասէ. Ճշմարտիւ ասեմ,

« ով դատաւոր վասն իմ, զի 25 ամ
« ունիմ» որով ընդ վայր աղանդաւորե-
« ցայ. իսկ այժմ ծանուցեալ զճշմարիտն
« Աստուած՝ ՚ի հայրենի բազմաստուա-
« ծութենէն հրաժարեցի. վասն որոյ
« ոչ այսուհետեւ կենցաղոյս պատրանք
« յայլոց հաւատոց անջատեցեն զիս.
« քանզի հանդերձեալ եմ տանել հա-
« սելոց տանջանաց » : Այս համարձակ
և կտրուկ խօսքին փոխարէն՝ հրամայեց
մարդպանն որ ծեծ զարնեն Մախոշի
երկու անգամ՝ տասներկու, որ կ'երևի
թէ Պարսից պատժողական օրինաց մէջ
նշանակութիւն մ'ունի : Անկէ զատ՝ ա-
նոր վայելուչ հասակին և մոգութեանը
զարդ մօրուքը և մազերը՝ կտրել տուաւ.
ձեռք ու ոտքն այլ կապել տալով՝ հրա-
մեց որ ձգեն ՚ի բանտ. ուր որ բաւա-
կան ատենէ վեր բանտուած էր իրեն
պէս զրադեշտի աղանդէն հրաժարող
և քրիստոնեայ եղած Ռաժիկ մը ներ-
սէս անուամբ, որ և յետոյ Մախոշի
վարըր և նահատակութիւնը գրեց (ըստ
Յայսմաւուրաց վկայութեան.) իսկ հի-
մայ կուսովրեցընէր անոր « զսուրբ հա-
« ւատս, և զսաղմոսս քսան. և այսպէս
« անդադար պաշտէր զԱստուած և ա-
« դօթէր » :

Նիխորական՝ թերևս Մախոշի նշա-
նաւոր և մոգ ըլլալուն համար՝ չէր հա-
մարձակեր մէկէն աւելի խիստ և յե-
տին դատաստանաւ դատելու, կամ յար-
մարագոյն ժամանակի կու սպասէր.
բայց իրեն չյաջողեցաւ այս ժամանա-
կը. յետ կանչուեցաւ ՚ի խոսրովայ ար-
քայէն Պարսից, և զՄախոշ թողլով ՚ի
բանտին՝ զնաց առ թագաւորն, ու քիչ
ատենէն սպարապետ դրուելով Յու-
նաց դէմ՝ Լազիստանի պատերազմաց
միջոց՝ հոն զրկուեցաւ 60000 զօրօք,
որոց մէկ երկու անգամ իր հպարտու-
թեամբ և անհանձարութեամբն յաղ-
թուելու պատճառ եղաւ, և գրեթէ բա-
նակին քառորդը ջարդել տալով ա-
ռանց թշնամեաց միաս մը հասցընելու՝
քաշուեցաւ ՚ի վրաստան. ուսկից կան-
չուեցաւ ՚ի Պարսս, և իրեն խայտառակ
զօրավարութեանը վարձք, չարաչար և

պժգալի պատիժ մ'առաւ. սրտմտեալ
թագաւորն՝ ողջ ողջ անոր կաշին հա-
նել տուաւ, և տիկ ձեացընելով Տիզ-
բոն մայրաքաղաքի ամենէն բանուկ հը-
րապարակին մէջ կախել տուաւ :

Նիխորականի յաջորդ մարզպան եղաւ
Նախապետ, իրեք տարի. որ և ՚ի սկզբան
իր նախորդին պէս յատեան քաշեց ըզ-
Մախոշ, և քննելով ունոյնպէս հաստա-
տուն գտնելով զնա ՚ի հաւատս քրիս-
տոսի՝ աւելի չարաչար ծեծել տուաւ, և
երկաթի շղթաներով կապել ու թո-
ղուլ ՚ի բանտին : Այս եռամեայ բան-
տարգելութեան միջոց Մախոշ անդա-
դար աղաչանօք մկրտեցաւ իր բանտա-
կիցէն (Ներսիսէ) որ և քահանայ էր, և
Յայսմաւուրք արեղայ կոչեն. և ինքը
խնդրեց, որ իրեն անուն զնէ Յիզիտ-
բուզիտ, կամ ըստ Պարսիկ հնչման Եզ-
տիբուզիտ, որոյ բուն իմաստն է Աս-
տուծոյ շնորհահատոյց, կամ Աստուած-
նապրեցոյց ինչպէս կ'ըսէ Յովհանն կա-
թողիկոս, կամ ինչպէս մեր վկայա-
բանն կ'ըսէ, յԱստուծոյ-փրկեալ, և
կ'աւելցընէ թէ և քարգմանի Աստուա-
ծաստուր. վասն զի այս անունս աւե-
լի ծանօթ և իմաստին մօտ ըլլալով՝ այս-
պէս անուանեցին Հայք և այսպէս կար-
գեցին ՚ի տօնացոյցս. նոյնպէս կ'ընեն
և օտարք՝ երբ ուզեն թարգմանաբար
կոչել այս Պարսիկ անունը : — Կնքոյն
և անուանն հետ երանելի մոգն փոխեց
իր ձեն այլ. ինչուան այն ատեն իր սո-
վորական հազուատներովն էր, հանեց
զանոնք, բաժնեց աղքատաց, և անոնց
տեղ հագաւ մազեղէն և բոպիկ ոտիցն
այլ հողաթափ : « Եւ այսպէս պահովք
» և աղօթիւք հսկէր, սաղմոսելով ան-
» դադար, գեղեցիկ կրօնաւորութեամբ » :

Յետ երեք տարւոյ՝ Նախապետին
տեղ եկաւ Քնուրիկ ըստած մարզպան
մը որ հակառակ գեղեցիկ կոչմանն խառ-
նակ և դաժան ձայներ լսեցուց. առջին
ներէն աւելի խստանալ սկսաւ քրիս-
տոնէից վրայ իրեն համամիտ պաշտօ-
նէիւքը, որոցմէ չարագոյնն էր ատենա-
դպիրն. որ լսելով Աստուածատրոյ դի-
պուածը՝ զնաց ՚ի բանտ, և կէս յան-

դիմանութեամբ և կէս խաբէութեամբ սկսաւ ըսել. Միայն դո՛ւ այդչափ խելացի գտուեցար՝ որ բոլոր Արեաց (Պարսից) աշխարհը բաւական չսեպեցիր, և ելար գնացիր ուրիշի ծառայ ու գերի եղար : — Աստուածատուր պատասխանեց, թէ ծառայելն ամօթ չէ, այլ և բնական ամենուն. դու որու որ կարօտիս՝ անոր ծառայ ես, կենդանիք մարդկան կու ծառայեն, մարդն այլ՝ Աստուծոյ. ես երբեմն տգիտաբար ընդունայնութեան ծառայեցի, « իսկ յորժամ » գթացաւ յիս՝ Աստուած՝ կալեալ զմտաւ » ծովենէ իմէ՝ կապեաց 'ի սէր պաւ » տուիրանաց իւրոց, ներկեալ յուսով » շնորհի իւրոյ. զոր ոչ կարասցեն կեն » ցաղոյս փորձութիւնքս փոփոխել » : Դպիրն փոխանակ իր լեզուի ճարտարութիւնը թափելու, որով՝ իմացաւ թէ պիտի չյաջողի, բիրը վերցընելով՝ անգթաբար ծեծեց զվկայն. և յետոյ ուրիշ տանջանք և նեղութիւններ այլ տալ տուաւ. բայց ոչ բրով և ոչ բռնութեամբ կրցաւ յաղթել : Միայն թէ իր և նմանեաց ըրածներն ձանձրացուցին ըզՀայս, որք և ազգովին բողոք խաւրեցին առ թագաւորն խոսքով, յիշեցընելով իր պապուն խոստմունքը՝ չնեղելու զՀայս վասն հաւատոց :

Խոսքով առանց դժուարութեան լրսեց Հայոց պատգամաւորաց. վասն զի կու վախէր որ չըլլայ թէ նեղանալով իրմէ զլուխ քաշեն և Յունաց կողմն անցնին, որոնց հետարդէն թշնամութեամբ և կռուով էր : Խոստացաւ շուտով քրննութիւն և արդարութիւն ընել. և յիւրափ առանց ուշացընելու՝ խաւրեց 'ի Հայս երեք մեծ և խոհեմ իշխաններ, որք էին Նատոյ, ըստ պատուոյ աստիճանին կոչուած դրոյխանդակսն. խոյապ թագաւորին հաւատարիմ սպասաւորաց մէկն, և Պերոզ՝ Ռէոյ գաւառին մոգպետն. որ և իրենց տիրոջ հրամանին համեմատ անաչառ քննութեամբ դատելով՝ դատապարտեցին անիրաւ զրկահարները, և առաջուան պէս դիւրութիւն ըրին Հայոց, որ միամտութեամբ ծառայեն Պարսից թագաւորին :

Սակայն այս դիւրութեան մասնաւորից չեղան Հայ չեղողք, մանաւանդ զբրաղեշտական կրօնքէն 'ի քրիստոնէականը դարձողք, ինչպէս էին Յիւդիտրուզիտ, Ներսէս, և անոնց բանտակից Ատրապատիկ մը Սահակ անուամբ : Այս երեքն այլ յատեան կանչեցին եռապետք քննիչք, քանի մը անգգամաց մատնութեամբ զրգռուած. և Պերոզ՝ իբրեւ պաշտօնեայ կրօնից՝ սկսաւ մէկ մէկ քննել. « Դու ինչո՞ւ քրիստոնէայ եղար » . հարցուց նախ Ներսեսի : Նա այլ ըսաւ. Մայրս բուն քրիստոնէայ էր, զիս այլ քրիստոնէութեամբ մեծցուց : — Հապա դո՛ւ. հարցուց Սահակայ. — Ես տղայութեան ատենէս քրիստոնէայ եղած եմ, ըսաւ : — Կարգն եկաւ Աստուածատրոյ, որ ընկերացը քննութեան ատեն՝ ետենին կեցեր ցած ձայնով՝ « Տէր, մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս » սաղմոսը կ'ըսէր. իր ո՞վ ըլլալը լաւ գիտէին դատաւորքն և իրենցմէ առաջ եղած քննութիւններն այլ լսելով՝ վախցան որ նորէն իրենց կրօնքին նախատիւք չհասնի անոր խօսքերէն ամենուն դիմաց. ուստի զինքն առանձին կանչելով և յանդիմանելով՝ ըսաւ մոգպետն. « Այ թշուառական, » ընդէր զլուսաւոր դէնն թողեր, և » նսեմաւոր քրիստոնէութեան հաւա » տացեր » : Սուրբն պատասխանեց թողած կրօնքին խայտառակութիւնը ցուցընելով և ընդունածին սրբութիւնը. և թէ « Գրիստոնէութեան միայն է կա » ռողութիւն փրկել յահագին 'ի մա » հուանէն » :

Յայանի է որ այսպիսի գեղեցիկ պատասխանեաց փոխարէն ծեծ ու փետ պիտի ըլլար, և այլ աւելին. վասն զի հրամեց լիբ մոգպետն որ Սրբոյն պարկեշտ պարեգօտը պատռեն, կնկուղը գետին զարնեն, զլուխը կռփեն, և մօրուքը փետրի պէս փետտեն : Ասանկ խղճալի կերպարանքով դարձուցին զԱստուածատուր 'ի բանտ՝ իր երկու ընկերներովը. և երեք օրէն ետեւ նորէն յատեան բերին, քննեցին, նոյնպէս հաստատուն դտան : Ապա չարահայտ

մոգպետն պատուիրեց որ իրեքն այլ զատ տեղ սենեկի մը մէջ փակեն, ցորեկն անօթի թողուն, իսկ բոլոր գիշերը ծխով մխով հեղձամըձուկ ընեն զանոնք. թէ և չմեռան, բայց շատ չարչարուեցան նահատակքն, սակայն խըղդուած ձայնով այլ չդադրեցան սաղմոսելէն մինչև ցառաւօտ: Տասն օր այսպէս չարչարանք մնացին 'ի բանտին. վերջի առաւօտն որ էր նոյեմբերի 9 և կիրակի օր, Աստուածատուր պատմեց ընկերացն՝ թէ այն գիշեր յերազին տեսաւ որ մէկն վարոցով ուժով մը զարկաւ գլխուն, ուսկից արիւն կը վազէր երկու աչաց միջոցէն. բայց մէկէն երեք լուսաւոր անձինք վրայ հասան, վաճառեցին վարոցաւոր մարդը, և իր գլուխը մարգարտակապ պսակ մը դրին: — Անշուշտ, ըսին ընկերքն, քու մարտիրոսութեան և պսակուելու ժամանակդ մօտեցեր է:

Ոչ միայն մօտեցեր, այլ և հասեր էր օրն և ժամն. արդէն դահճապետն բանտին դուռը կու փնտռէր. և ներս մըտնելով՝ նշան տուաւ Յիզիտրուզիտի որ գայ ետևէն: Չգիտեմ՝ իր ընկերաց տրտմութիւնն աւելի մեծ եղաւ իրմէ զատուելուն և մնալուն համար, թէ իր ուրախութիւնն՝ 'ի հանդէս նահատակութեան կանչուելուն համար. անշուշտ երկու կողմէն այլ ոչ առանց արցունքի տուին այն ողջոյնը և համբոյրը՝ որ երկրի և երկնից միջոց կախուած կապ մ'էր. ամենքն այլ փափագէին այն կապը բռնած վերանալ յերկինս, բայց միայն մէկուն հրաման եկած էր վերէն: Փութացաւ Յիզիտրուզիտ բաժնուելու իր քրիստոնէութեան վարդապետին գրկէն, ('ի Ներսիսէ), որ չուշանայ երկնաւոր վարդապետին (Քրիստոսի) գիրկը հասնելու. և երթալուն ատեն « ի կարդալ իմում լուար ինձ Աստուած », սաղմոսն ըսելով՝ շուտով հասաւ յատեան դատաւորացն, որոց հետ նստեր էր չորրորդ մ'այլ, կամ դահճապետն կամ՝ նոր մարզպան մը. չորս դին պարսպաձև բոլորած կենային մեծին 'Դունայ քրիստոնէից անհամար բազ-

մութիւնն, որք իրենց կրօնից ազատութիւն ունենալով՝ անվախ եկեր էին տեսնելու օտարազգւոյն նահատակութիւնը, և մէկէն հոգւոյ խնամութեամբ իրենց եկեղեցւոյն պայազատելու զնա:

Հրապարակաձև ատենին, կամ այն զարմանալի թատրոնին մէջ երեք փայտ կանգնած էր, երեք յենարան բռնի օրհասականաց. կախաղանք մահապարտաց: ... Գեղեցիկ ծառն և ամենապէտ փայտն ասկէ աւելի պժգալի պաշտօն չեն կատարեր. բայց յետ որոյ այն գերագոյն Մէկն ասանկ փայտի մը վրայ կախուած անմահական կենաց պրտուղ երեցաւ, այդպիսի փայտն այլ շատ հեղ շատոց ցանկալի եղաւ. ինչպէս հիմայ այլ Աստուածատրոյ. որ և ուրախութեամբ իր յետին յենարանը ողջունելով, գուցէ պահ մը կարծեց, թէ ուրեմն իր երկու բանտակիցքն այլ վերջապէս իրեն ընկերակից պիտի ըլլան յաւիտենական ճամբուն մէջ: Իրաւունեցաւ երկու ընկերներ, բայց ոչ զՆերսիս և զՍահակ, այլ զնմանիս անոնց՝ որ իրեն նմանութեան նախօրինակին երկու կողմը կանգնեցան 'ի Գողգոթա. երկու յանցաւոր, երկու չարագործ, երկու մահապարտ: Այս Յիսուսի նմանակցութեան պատիւն այլ ունեցաւ Աստուածատուր. — Կու տեսնե՞ս այդ փայտը, կանչեց մոգպետն, այդոր վրայ պիտի մեռնիս չարաչար, եթէ յամառեալ մնաս մտացդ վրայ: — Ես հաստատուած եմ, ըսաւ սուրբն, 'ի հաւատս Քրիստոսի, և ամենևին դառնալիք չունիմ. դու ընելիքդ կատարել տուր: — Հրամայ մոգպետն որ տանին զնա 'ի փայտն. Աստուածատուր ուրախութեամբ վազեց դահիճներէն առաջ, որք մերկացնելով զնա՝ կապեցին և կանգնեցին:

Շնորհակալ եղաւ Սուրբն որ՝ նաև այսպէս զգեստներէն կողոպտելով այլ՝ զինքը կու նմանցընեն իր տիրոջն 'ի խաչին: — Մոգպետն՝ կամ՝ յիրաւի խնայելով, կամ սատանայութեամբ յաղթել ուղեւով նահատակին, վերջին անգամ մ'այլ խաւրեց անոր՝ ըսելու, որ դեռ

ժամանակ կար, բայց վերջին և կարճ ու անդարձ ժամանակիկ մը զինքն ապրեցրնելու, եթէ հրաժարելով 'ի քրիստոնէութենէ՝ դառնայ 'ի հին մոգութիւնն : — Սուրբն՝ և ոչ պատասխանոյ արժանի սեպեց այսպիսի դեսպանութիւնը : Իր լուծիւնն լուծեց բռնաւորին արիւնալից հրամանը . և ահա սկըսան դահիճքն սուր սլաքներով խոցուտել կողերը, և արեան անձրև մ'իջուցընել : . . .

Նոյն ատեն երկու յանցաւորներն այլ հանեցին 'ի փայտն . աջակողմեանն՝ նման ֆրիստոսի խաչակցին, որոյ հաւատացեալ էր և ազգաւ թուփիկ, հաւատքով՝ սրբոյն ոտքերը պագաւ, և ահոր արիւնով թրջած հողը իր ծոցը կուլեցընէր . իսկ անզգամ՝ դահճապետն անոր գլուխը կռփելով շուտով հանել կանգնել տուաւ 'ի փայտն, և նետով զարնել, որև շուտով աւանդեց հողին : Զախակողմեանն այլ նոյնպէս նմանող եղաւ իր հին կողմնակցին . անիրաւութեանցը վրայ մեծագոյն մ'այլ աւելցուց : Հրեայ էր ազգաւ, սկսաւ աղաղակել վայրախօս Հրէի պէս . Զիս « մի » կորուսանէք . զմոգութիւն յանձն առ » նում : Դատաւորք մտիկ չըրին անխիղճ և անզեղ ձայնին . կապեցաւ կախուեցաւ և կորաւ, ինքն իր դատապարտութեանը վկայելով :

Իսկ « Երանելին 'ի մէջ երկուց մա » հապարտացն՝ 'ի բարձր տեղով ողջ ջակիզեալ յանդիման արեգականն և » ամենայն ժողովրդոցն : Որ ունէր խոր » հուրդ զարմանալի, որ և յիշատակեալ » 'ի նա տերունոյն բան՝ ըստ ճշմարիտ » խոստմանն, թէ որ հաւատայ յիս՝ » զգործսն զոր ես գործեմ և նա գոր » ծեսցէ, և մեծամեծ ևս քան զնոյնս . » և Առաքեալն ասէ . Զորս յառաջն ճա » նաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կեր » պարանակից լինել պատկերի Որդւոյ » իւրոյ : — Եւ այսպէս քաջութեամբ » վկայեաց սուրբն Յիզկիարուղիտ, 'ի » ի Գ ամին խոսրովու թագաւորին, որ » օր երկու (էր) քաղոց ամսոյ, յաւուր » կիրակէի, յերրորդ ժամու » :

Ամօթապարտ դատաւորքն իրեւ վերջին վրէժ՝ չթողուցին որ մէկէն վերցընեն Աստուածատրոյ մարմինը . բայց ոչ այլ շատ կրցան ուշացընել . հաւատացեցոց խնդիրն և ձայնն բարձրացաւ . յաղթանակաւ իջուցին քրիստոնէացեալ մոգին մարմինը, և մեծ հանդիսիւ ու փառօք փոխեցին 'ի հանգիստ վկայից, իրեն արժանաւոր տեղ մը 'ի սուրբ տաճարին . որ և երկնափայլ լուսով պայծառացեալ՝ սուելի զուարճացուց զհաւատացեալս և ամաչեցուց ըզմոխրապաշտ մոգերը :

Այսպիսի պանծալի և շատ ատենէ վեր չսուած նահատակութեան մը համբաւ, որով և Յիզկիարուղիտ անունը՝ շուտով տարածեցաւ բոլոր արևելեան քրիստոնէից մէջ, և Յունաց կայսրութեան ընդարձակ գաւառները . ուրախացան մեր սուրբ կրօնիցնոր և յայտնի յաղթանակին վրայ . բայց ամենէն բաղդաւոր սեպուեցան Հայք, անոր հանդիսարան ընծայելով իրենց մայրաքաղաքը, մայր եկեղեցին և ինչուան հիմայ՝ տաբեկան տօնախմբութիւն մը :

Նախայիշեալ Մենանդր պատմիչն իր կորուսեալ և կտրատեալ պատմութեան մէկ պատառին մէջ սրբոյն մէկ վերջի խօսքը կու յիշէ՝ երբ խաչին վըրայ պրկուած էր, և երբ կու յորդորէին թողլու զքրիստոնէութիւն՝ որ իրեն մահուան պատճառ պիտի ըլլար . Ես ոչ եթէ կը ցաւիմ, ըսաւ, այսպիսի կրօնք մը գտնելու, հապա ուշ գտնելուս համար : — Իսկ նոյն հեղինակին առ նոյն սուրբն ու իրեալ վերտառութիւնն, զոր և 'ի սկզբանն յիշեցի, այս է .

1 Այս անուանա մէկ հնագոյն գործածութիւն մը յայտնուեցաւ 'ի Զինաստան, գիտնոց և քրիստոնէութեան մէջ հռչակեալ արձանագրութեան մը վրայ, չինարեն և ասորերէն, պատմելով այն աշխարհին մէջ քրիստոնէութեան քարոզուիլը յամին 636 . արձանը գրուած է յամին 781 . սոսրադրողներէն մէկն է Յէլպէոս-լոփ քահանայ, հայր Ադամայ սարկաւագի, փոխանորդ արքեպիսկոպոսին :

Մոգ եւ երբեմն 'ի Պարս էի Յիզկարուզիտ ,
 Ի հեզեզանս անտիս ըզյոյս իմ կառուցեալ .
 Հուր ճարակէր զոստանն իմ . յօգըն ճեպեցի .
 Ճեպեաց 'ի նոյն ու ամենազօր Գրիստեայ ծա-
 ռայն .

Նա զբընտութիւն նուաճէր բոցոյն . իսկ եւ
 պարտեալ
 Զաստուածայինն յաղթութիւն ընկալայ պսակ :

Այսպէս օտար մը , Յոյն մը , բայց
 հաւատարիմ եւ ընտիր հեղինակ մը ,
 Մենանդր , կարճ տողերով գեղեցիկ եւ
 թանկ վկայութիւն մը կու տայ՝ թէ Աս-
 տուածատրոյ յաղթական հաւատոցը ,
 եւ թէ յաղթաութիւն հաւատոց ռամենա-
 զօր ֆրիւտուսի ճառային . որ թէ ոչ
 կաթուղիկոսն Հայոց՝ այլ Դունայ մէկ
 եկեղեցւոյն աւագերեցն էր . որ « զբըն-
 տութիւն նուաճեաց բոցոյն » 'ի ճարա-
 կին 'ի տան Համակարին , եւ զստուշա-
 ճայիկըն յաղթութեան պսակ իջուց 'ի
 զլուս քրիստոսահրաւէր մոգին Մախու-
 շի , փոխելով զնա 'ի Յիզկարուզիտ , այն
 է Աստուածատուր :

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Թաւնոց բոյներուն խնայելու
 օգոշոր .

Ասնն մը երբ հիմակուան պէս որ-
 սորգութիւնը յաճախած չէր եւ իրենց
 բոյներուն մէջ աներկիւղ էին թռչուն-
 ներն , ինչպէս է սարեկը , սոխակը ,
 չիկահաւը , թխկատարը , կարմրալան-
 ջը , եկըանիկը , կտաւքաղը , սարեկի-
 կը , կանաչ սարեկիկը , արտոյտը , ցախ-
 սարեկը , եւ այլն , միջին հաշուով ա-
 մեն գարուն մէկ փարսախ քառակու-
 սի երկրի վրայ 10,000 թռչնոյ բոյն կը
 համրուէր (ի Գաղղիա) . իսկ թէ քանի
 թռչուն պէտք է դնել ամեն մէկ բունի ,
 առաւ միջին հաշուով մը չորս դնենք
 նե՛ շատ չըլլար : Արդ կը մնայ ասոնց
 կերակրոյն տեսակն ու չափն իմանալ .
 տեսակն է որդ , իսկ քանակը քիչ շատ
 ամեն ձագ 15 որդ կ'ուտէ օրուան մէջ .

դնենք 60 մ'ալ իրենց հօրերուն եւ մօ-
 րերնուն համար , որով կ'ըլլայ բոյնի մը
 ամենօրեայ կերակուրը 120 ճճի : Բազ-
 մապատկենք 120ը 10,000ով եւ կ'ընէ
 մէկ միլիոն եւ երկու հարիւր հազար
 ճճի . ասոնք օրուան մէջ կը ջնջուին մէկ
 փարսախ քառակուսի երկրի վրայէն .
 իսկ ամսուան մը մէջ կ'ընէ 36 միլիոն :

Այս հաշիւս դնելէն ետքը , թող որ-
 սորդները մտածեն , որ երբ չեն խնայեր
 այն անմեղ արարածոց , եւ կը թողուն
 որ այնչափ որդունք շատնան մէկ փար-
 սախ քառակուսի երկրի վրայ , ինչ վը-
 նասներ չեն կրնար հասցընել երկրին
 բուսաբերութեանը :

Եւրոպիոյ քաղաւորաց տարեկան
 հասոյքը .

Ռուսաստան	42,582,225 ֆռ .
Տաճկաստան	33,347,050
Գաղղիա	25,000,000
Աւստրիա	19,013,675
Իտալիա	16,850,000
Սպանիա	13,087,500
Մեղղիա	11,750,000
Բրուսիա	11,750,000
Պաւիերա	6,240,825
Պելճիա	4,201,400
Փորթուկալ	3,800,000
Յունաստան	1,391,000